ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մար-Մադէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 10.05.2021թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերնաշապիկների, կիսավերարկուների, գլխարկների, խմելու ջրի տարրաների, ջրի շշերի կրիչների, բարձերի, բարձերեսների, սրբիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթակարգի շրջանակներում «Մար-Մադէլ» ՍՊԸ-ի կողմից 07.05.2021թ. ներկայացված (10.05.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/28 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Մար-Մադէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մար-Մադէլ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.05.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Վերնաշապիկներ, կիսավերակուներ, գլխարկներ, խմելու ջրի տարաներ, ջրի շշերի կրիչներ, բարձեր, բարձերեսներ, սրբիչներ»-իձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Մար-Մադէլ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 05.04.2021թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 19.04.2021թ. ներառյալ (արտատպումը կցվում է):

«Մար-Մադէլ» ՍՊԸ-ն 16.04.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը /ապահովումների հետ միասին/ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/:

Արդեն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից՝ ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով պատվիրատուին հաստատված պայմանագիրը չներկայացնելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին

ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «վերնաշապիկներ, կիսավերակուներ, գլխարկներ, խմելու ջրի տարաներ, ջրի շշերի կրիչներ, բարձեր, բարձերեսներ, սրբիչներ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն:

«Մար-Մադէլ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Մար-Մադէլ» ՍՊԸ-ն 16.04.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը /ապահովումների հետ միասին/ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին:

Մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից՝ ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով պատվիրատուին հաստատված պայմանագիրը չներկայացնելու հիմքով/:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Այսպիսով, «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի

նախագիծը ստանալուց (05.04.2021թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.04.2021թ. ներառյալ), այն է՝ 16.04.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը /ապահովումների հետ միասին/ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն 8-րդ չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը չի ներկայացել:

Հատկանշական է, որ նշված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները, որի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

16.04.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Մար-Մադէլ» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «Մար-Մադէլ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 16.04.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ին պայմանագիր ստորագրելու (կնքելու) իրավունքից զրկելու վերաբերյալ կայացրած որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/28 բողոքի քննության նպատակով 14.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

<u>2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.05.2021թ. թիվ ՊՆ/02/2639-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Մար-Մադէլ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում Ընթացակարգի գնահատող հանձնաժողոի որոշմամբ 24.03.2021թ.-ին ճանաչվել է ընտված՝ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով: 05.04.2021թ.-ին Armeps (www.armeps.am) համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը: Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.04.2021թ.) պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և դրա կատարման ու որակավորման ապահովումները:

Մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը ստացվել է փոստային առաքման միջոցով 21.04.2021թ.-ին և նույն օրը հաշվառվել է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում (մուտք N 296):

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.04.2021թ. N ՊՆ/02/1633-2021 հարցումը և դրան ի պատասխան ուղարկված 28.04.2021թ. N 01.1/26-1/6440-2021 պարզաբանումը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով 30.04.2021թ. Մասնակիցը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից՝ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/28 բողոքի քննության նպատակով 14.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3.<u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար վերնաշապիկների, կիսավերարկուների, գլխարկների, խմելու ջրի տարրաների, ջրի շշերի կրիչների, բարձերի, բարձերեսների, սրբիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 24.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մար-Մադէլ» ՍՊԸ-ին 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.04.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.04.2021թ.), պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և դրա կատարման ու որակավորման ապահովումները և որոշում է կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մար-Մադէլ» ՍՊԸ-ի կողմից 07.05.2021թ. ներկայացված բողոքը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիր:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար վերնաշապիկների, կիսավերարկուների, գլխարկների, խմելու ջրի տարրաների, ջրի շշերի կրիչների, բարձերի, բարձերեսների, սրբիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 24.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է

կայացրել «Մար-Մադէլ» ՍՊԸ-ին 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.04.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.04.2021թ.), պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և դրա կատարման ու որակավորման ապահովումները և որոշում է կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը 17.05.2021թ. թիվ ՊՆ/02/2639 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացվելիք փաստաթղթերը ստացվել են փոստային առաքման միջոցով 21.04.2021թ.-ին և նույն օրը հաշվառվել է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում (մուտք N 296):

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 14.05.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/7710-2021 գրությամբ խնդրել է՝ հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրելու «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից փոստային առաքման միջոցով ուղարկված ծրարում ներառված փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:

Ինչպես նաև Ընկերության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է հաստատված պայմանագիրը, պայմանագրի կատարման ու որակավորման ապահովումները «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին հանձնելու վերաբերյալ անդորրագիրը, համաձայն որի՝ RR262505273AM կոդով թիվ 1139 առաքանին (ուղարկող՝ «Մար-Մադէլ» ՍՊԸ, ստացող՝ ՀՀ պաշտպանության նախարարություն) ***«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին հանձնվել է 16.04.2021թ.:***

Այսպիսով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Ընկերության կողմից սահմանված ժամկետի պահպանմամբ, այն է՝ 16.04.2021թ. (մինչև 19.04.2021թ. ներառյալ), հաստատված պայմանագիրը, պայմանագրի կատարման ու որակավորման ապահովումները կապի կազմակերպությանը հանձնված լինելու պայմաններում, 30.04.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ, այսինքն՝ գործել է ոչ իրավաչափ՝ անտեսելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իմպերատիվ դրույթը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մար-Մադէլ» ՍՊԸ-ի կողմից 07.05.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ ընդունված որոշումը՝ «Մար-Մադէլ» ՍՊԸ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**